Բախումնային (կոնֆլիկտային) խոսույթը՝ որպես անձի ու հասարակության ձևավորման անհրաժեշտ գործոն

Անի Հարությունյան

Հանգուցային բառեր. *կեցություն, հանրային միջավայր, միջանձնային հարաբերություններ, հանրայնացում, արժեքաբանական ըմբռնումներ, հանրային նույնականություն, զարգացում*

Նախաբան

Բախումնային խոսույթը[1], լինելով փիլիսոփայական խնդրի ուսումնասիրության կարգավիճակում, վաղուց «գրավել» է հասարակական գիտակցության բոլոր շերտերը: Ի հեճուկս երրորդ հազարամյակի նախաշեմին համաշխարհային «ընտանիքում» իբրև սկզբունք որդեգրված փոխադարձ հանդուրժողականության գաղափարի՝ բախումն առավել ցայտուն դրսևորում ունի և՛ անհատական, և՛ հասարակական կեցության մեջ: Իսկապես, վիճարկման ենթակա չէ փաստն առ այն, որ ժամանակակից հասարակությունն իր գեր- և մանրամակարդակներով աչքի է ընկնում բախումնածին հարաբերություններով: Ընդունելով բախման՝ գաղափարական ու գործնական ներկայությամբ գոյաբանորեն հիմնավորված լինելը՝ նկատենք, որ հետազոտման օբյեկտի տեսանելիության համար ենթադրվում է առնվազն երկու կողմի՝ անձի ու հասարակության երկխոսություն՝ իր ենթատարրերով հանդերձ: Խնդրին անդրադառնալով հանրամարդաբանական տեսանկյունից՝ անհրաժեշտաբար կարիք է առաջանում վեր հանելու, թե ինչպես են առհասարակ կենսագործվում մարդու հանրայնացման գործընթացն[2] ու հասարակության հետ փոխհա-

---

[1] Սույն աշխատանքում «բախումնային խոսույթ» եզրույթի մեկնաբանման բազմազանությունից ընտրվել է դրա կիրառման նեղ իմաստը, այն է՝ «…. բախումնային խոսույթը փոխազդեցության տեսակներից մեկն է, որը հատուկ է մարդու հաղորդակցական գործունեությանը, և որը համարվում է տարաձայնությունների լուծման եղանակներից մեկը…». տե՛ս Сеирранян М. Ю. Конфликтный дискурс и его просодический строй: Монография, Москва, МПГУ, 2016, էջ 9:

[2] Մարդու հանրայնացումը ենթադրում է կյանքի ընթացքում շարունակվող մի գործընթաց, երբ ծնված օրվանից լինելով որպես այս կամ այն հասարակության մաս (դրանով իսկ արդեն լինելով անհատ)՝ հանրային տարբեր կապեր, հարաբերություններ հաստատելու, հանրային տարբեր դերեր կրելու եղանակով նա դառնում է անձ կամ անձնավորություն: Ինչպես կարելի է կռահել, «մարդը» հավաքական, ընդհանրական հասկացություն է: Այս աշխատանքում եզրույթների կիրառումը համապատասխանում է նշյալ իմաստներին. առավել մանրամասն տե՛ս էլ. աղբյուր՝ https://spravochnick.ru/filosofiya/socializaciya_lichnosti_v_filosofii/, դիմելու ամսաթիվ՝ 02.12.2020:

բաբերման բարդ համալիրը, երբ «միջնորդի» դերում հանդես է գալիս բախումը:

Մարդու բախումնածին բնույթի մասին

Կամայական հանրային միավորում հաղորդակցության ծավալման ու փոխգործակցության ուրույն գործընթաց է, և այս իմաստով անհամաձայնություններն ու տեսակետների բախումներն անխուսափելի են, քանզի նշյալ խմբեր են ներառված տարբեր շարժառիթներ, նպատակներ ունեցող մարդիկ: Վերջիններիս գործողությունների դրդապատճառների բախումնածին լինելը մասնագիտական հետազոտություններում միանշանակ չի ըմբռնվել: Միտքն այն մասին, որ բանական էակին թվում է, թե ինքն է իր մտածական, զգայական ապրելիքի ստեղծարարն ու կենսատուն, երբեմն արժանացել է բավական լուրջ քննադատության: Կարծել, թե մարդը ներկայացնում է որոշումների կայացման հարցում *միայն* իր ցանկություններն ու սեփական մտքերը, «...պատրանք է, ընդ որում՝ վտանգավոր պատրանք»[3]: Մենք կարողանում ենք համոզել ինքներս մեզ, որ մտորելու ու համակեցության կազմակերպման այս կամ այն փուլում որոշում կայացնելու ինքնուրույնությունը մեզնից դուրս որևէ գոյաբանական պատճառավորվածություն չունի[4]: Էությամբ գուցե և ուտոպիստական այս մեկնության բացասման անդրադարձում շատ դեպքերում հիմնաքար է ընտրվել հենց հասարակական միջավայրը: Վերջինիս հետ ծանոթացման փուլն էլ պատճառավորում է բախումնային խոսույթի դերի ուսումնասիրման անհրաժեշտությունը հատկապես մարդու բարոյագիտական, հանրային կողմնորոշիչների կազմավորման համաշարում: Մարդու գործելակերպի տեսական հենքը հասարակական այն միջավայրն է, որը «թելադրում» է մտքին գոյաբանական ուղղորդիչներ: Սակայն էական է նաև այն, որ մարդը ոչ միայն ստեղծվում է հանրույթի միջոցով, այլև արարում վերջինիս: Այս ամենով հիմնավորվում է, թե ինչու է սույն աշխատանքում վերլուծվում մարդու, հասարակության և բախումնային խոսույթի կայացման փոխկախվածությունն ու միմյանց ստեղծելու անխուսափելիությունը:

Ընդունված է կարծել, որ մեզնից յուրաքանչյուրը ձգտում է բավարարել սեփական շահը և ունենալու այն, ինչ իրեն անհրաժեշտ է: Եվ քանի որ մարդկանց մեծամասնությունը ձգտում է դրան, հասարակության

---

[3] Э. Фромм, Бегство от свободы. Человек для себя // Фромм Э. Пер. с англ. АСТ: АСТ МОСКВА, Москва, 2006, с. 194.

[4] Sté́u Куэ Э. Сознательное самовнушение как путь к господству над собой. Амрита-Русь, Москва, 2005, էջ 58-59:

համար ձևավորվում է «ընդհանուր օգտակարության գործակիցը». ամեն մեկի օգուտի ու բարիքի ձեռքբերումը մեզ ուղղորդում է դեպի համահասարակական օգուտի գոյակերտման: Սակայն հանրային կյանքի ընթացքն այդքան էլ միագիծ չէ: Իրականում սեփական «ես»-ին հաճոյանալու բոլոր ձգտումները պատճառավորում են մարդու՝ մշտապես բախման մեջ գտնվելը: Բանական էակին բնությունից «փոխանցված» է իրենով գոհանալու ոչ թե ներանձնային, այլ միջանձնային մտակաղապարը: Եվ այս համաշարում արժանահավատ է ըմբռնվում հատկապես հանրային «համակրանքը»: Որպես կանոն ինքնաբավության ազդեցությունը տևական է հենց այլ մարդկանց հետ համեմատության ու նրանցից առավել լինելու հաստատման պարագայում: Վերջինի արձանագրման դիտակետում են հայտնվում հարգանքը, անձին արժևորելը, դրվատանքի խոսքերը և, ինչու չէ, նաև սեփական անձի գերազանցությունն այլոց կողմից բարձրաձայն հայտարարվելը: Անգամ սպանություն ու տարատեսակ վայրագություններ կատարող մարդու պարագայում է հիշյալը կիրառական. «Եվ նույնիսկ այն մարդկանցից, ում ինքը ստորացնում է, մարդը ցանկանում է ստանալ ընդունելություն՝ իրենից վախենալու կամ ենթարկվելու եղանակով»[5]:

Մարդկանց վարքանմուշային դրսևորումներում առկա տարբերությունները հատկապես նկատելի են բախումնային երկխոսության ծավալման ժամանակ: Փորձենք պայմանականորեն առանձնացնել հաղորդակցությամբ ձևավորվելիք մարդկանց երեք խումբ և դրանց համապատասխան պատճառներ, որոնք ստիպում են նրան ներառվել բախումնային խոսույթ: Բոլորի պարագայում մարդը գործի է դնում բռնությունը:

1. Առաջին խումբ ներառվող մարդիկ բռնանում են դիմացինի վրա՝ նրանց անձը կամ նրանց ունեցվածքը վերցնելու նպատակով (մրցակցային պատճառ):
2. Երկրորդ խումբ ներառվող մարդիկ բռնություն են գործադրում՝ ելնելով ինքնապաշտպանության նկատառումներով (անվստահության ապրման պատճառ):
3. Երրորդ խմբին պատկանող մարդիկ բռնանում են՝ ի պատասխան թվացյալ անարգանքի այնպիսի դրսևորումների, ինչպիսիք են անձին, մտերմին, հարազատին հասցեագրվող սխալ կիրառված բառը, տեսակետի հետ անհամաձայնությունը, «սխալ» կամ ոչ տեղին ծիծաղի և այլատեսակ անբովանդակ երևույթների դրսևո-

[5] У. Эко, Пять эссе на тему этики. «Симпозиум», СПб., 2003, с. 15.

ռումը (փառասիրության վայելքի պատճառ)[6]:

Վերը թվարկածից բխում է, որ մարդն իր գոյությունը ապացուցելու կամ դրա հանրային հիմնավորումը կորզելու համար սկզբունքորեն ունակ է դիմել կամայական քայլի:

Մարդու ու հասարակության փոխհարաբերման թաքնված շարժառիթների հպանցիկ ուրվագծման պարագայում առաջին հերթին երևան է գալիս անհատի ինքնապապաշտպանության բնազդը, որը դառնում է էական ազդակ հանրույթի հետ երկխոսության ծավալման համար, ինչը երբեմն վեր է ածվում բախումնային խոսույթի: Սա անհրաժեշտ է նաև անհատից՝ անձի ու անհատականության կերտման համար: Մեկ այլ դեպքում՝ կեցութային մակարդակում, մարդու՝ հանրային միջավայրին պատկան լինելը, առանց այլընտրանքային հնարավորություն չլինելու, կապ ունի սուբյեկտիվ մակարդակում անձի՝ ինքն իրեն գիտակցելու հետ: Մտահայեցողական գործունեության ու դրա դրսևորման ակնառու եղանակների՝ վերլուծման, հասկացման, օբյեկտիվ իրականության հետ քննադատական զրույցի ծավալման խորապատկերում է, որ անձը հաստում է իր՝ մարդկանցից զատ գոյություն ունենալը: Առաջին հայացքից դրական երանգ ունեցող այս դրույթը, անկախ դրա իրացման որակից ու խորությունից, կանգնեցնում է մեզ լուսանցքային իրողության առջև: Դիտարկելով ինքն իրեն աշխարհի մի մաս, միաժամանակ քննության նյութ դարձնելով սեփական անձից դուրս գտնվող ամենի օտարոտի լինելը՝ բանականությունը հուշում է իր «տիրոջը», որ վերջինս տիեզերական ծրագրի մի աննշան մասնիկն է: Գոյաբանական այս բարդույթի հաղթահարման միակ ուղին էլ արտաքին միջավայրը յուրային դարձնելն է վերջինիս հետ միավորման եղանակ ընտրելու ճանապարհով: Հնարավոր համարելով հասարակական այս կամ այն «հաշվարկման» համակարգին ներառվածությունը՝ մարդն օժտում է ինքն իրեն իմաստավորված գոյությամբ. «ապրել գործելով» միտքը հաղթանակում է «ապրել լոկ լինելով» մտքի նկատմամբ:

Միմյանց հետ բարիդրացիական փոխհարաբերման ընթացակարգի տեսական ձևակերպումներում, որպես բախման գոյացման սլացում, ի թիվս այլ գործոնների, շրջանառվում է նաև ազատ լինելու ու դրա սահմանները որոշելու անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ որպես բարոյական հրամայական կարող ենք դիտարկել կոնֆուցիոսական, իսկ

[6] Տե՛ս Т. Гоббс, Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского // Т. Гоббс, Сочинения в двух томах. Т. 2. Пер. А. Гутермана, Издательство «Мысль», Москва, 1991, էջ 95:

հետագայում նաև աստվածաշնչյան «Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ցանկանա, որ անեն քեզ»[7] դրույթը: Վերջինիս իրացվելիության շրջանակներում մենք կա՛մ մոտենում ենք բախմանը՝ ընկղմվելով բախումնային խոսույթի մեջ, կա՛մ շարունակում ապրել խաղաղության ու փոխհանդուրժման միջավայրում: Սակայն դժվար է չհամաձայնել, որ անխռով, բախումնազերծ մթնոլորտում ապրելու գաղափարի կենսագործումն անմիջական կապվածություն ունի անձի վարքագծային ազատության հետ: Վերջինիս սահմանափակումը, հանուն խաղաղ համակեցության, կատարվում է այն չափով, որչափ դա թույլատրելի կդիտարկվի յուրայինի նկատմամբ: Ի վերջո, միմյանց ըմբռնելու առաջին փորձերում «…. ազատ ենք անվանում այն մարդուն, ով ապրում է սեփական անձի և ոչ թե ուրիշի համար….»[8]:

Բախումնային խոսույթը և անհատի ինքնության ձևավորման բարոյագիտական որոշ կողմնորոշիչներ

Յուրաքանչյուր մարդ ունի վարքականոնի հենքային կողմնորոշիչներ, որոնց շուրջը ջանում է ամրակայել իր գոյակերպը: Այս ուրվապատկերին առաջին հերթին երևան են գալիս բարու ու չարի, ազատության, պարտքի ու խղճի մասին արժեքաբանական ըմբռնումները, քանի որ միջանձնային բախումնային խոսույթի կերտման գործում դրանք աներկբայորեն ունենում են իրենց դերակատարումը: Ծնվելուն պես մեզ կանխատրվում է սույն բարոյագիտական կատեգորիաների պարտադիր գոյությունը, և ըստ էության հանրային կյանքի կազմակերպման բոլոր փուլերում կիրառում ենք դրանք՝ շատ դեպքերում վերագրելով «ելակետի» կարգավիճակ: Բարոյագիտության տեսաբաններ Ա. Հուսեյնովի ու Ռ. Ապրեսյանի դիտարկմամբ բարու ու չարի բովանդակային վեկտորն ուղղված է դեպի «…. բարոյական կատարելության իդեալ. բարին այն է, ինչը մոտեցնում է իդեալին, իսկ չարը՝ այն, ինչը հեռացնում է դրանից»[9]: Եթե խոսելու լինենք իդեալի՝ կատարելության եզրույթի իմաստի մասին, ապա «Նորմատիվ բովանդակությամբ պայմանավոր-

---

[7] Առաջին անգամ այս սկզբունքը (հետո արդեն անվանակոչված «էթիկայի ոսկե կանոնը») ներկայացրել է Կոնֆուցիոսը (մ. թ. ա. 551-479 թթ.), տե՛ս Конфуции. Суждения и Беседы, Издание 2-е, Феникс, Ростов-на-Дону, 2006, էջ 217: Այնուհետև այն հանդիպում է Արիստոտելի աշխատություններում ու Նոր Կտակարանում:

[8] Аристотель. Метафизика // Аристотель. Сочинения в четырех томах. Т. 1. Перев. и ред. А. И. Доватура, Мысль, Москва, с. 69.

[9] А. Гусейнов, Р. Апресян, Этика: Учебник. Гардарики, Москва, 2000, с. 188-189:

ված՝ բարին ու չարը.... մեկնաբանվում էին որպես երջանկություն ու դժբախտություն, հաճույք ու տառապանք, հանգամանքներին համապատասխան և դրանց հակոտնյա օգուտ ու վնաս և այլն»[10]: Հասարակական գիտակցության ձևերից մեկի՝ բարոյակ հիմնային հասկացություններ լինելուց զատ՝ բարին ու չարը անհատական գիտակցության մակարդակում ևս ունենում են իրենց բնորոշումները. ձևավորվելով տարերայնորեն՝ դրանց մասին ունեցած պատկերացումներով մարդիկ մի դեպքում տարբերվում են միմյանցից, իսկ մյուս դեպքում՝ նմանվում. արժեքային կաղապարումներն անհատական-անձնային են և առնվազն ժամանակի որոշակի հատվածներում՝ փոփոխական: Որպես այսօրինակ պայմաններում միջանձնային հաղորդակցման արդյունք անհրաժեշտաբար առաջանում է բախումը, իսկ երբեմն նաև դրա բարձրագույն դրսևորումը՝ հակամարտությունը: Իսկապես, «ո՞րն է բարիքը» հարցապնդումը երբևիցե միարժեք պատասխան ունենալ չի կարող, բայց ընդունված է կարծել, որ նախևառաջ այն զարգացման, աճի, խթանման, երջանկության, հաճույքի, ուրախության անհատական ազդանշանն է: Հարցին մոտենալով այս դիտակետից՝ կարող ենք ընդունել, որ բարիքի իմաստավորման, ձեռքբերման կամ նվաճման գործընթացը մեզ, իսկապես, իրարից տարբերում է և դառնում է բախումնային իրավիճակի ստեղծման գործոն այն դեպքում, երբ կա մեկ ընդհանուր բարիքի «օբյեկտ» երկու և ավելի հոգու համար:

XX դարի երկրորդ կեսից համաշխարհային քաղաքական ու հանրային հարթակներում տիրող խառնիխուռն ու չկանոնակարգված իրադարձությունները կասկածի տակ դրեցին նաև բարոյական առաջընթացի հնարավորությունը: Այս համաշարում Ա. Նազարեթյանի պնդմամբ «ընդհանրական դարձավ այն դատողությունը, ըստ որի՝ «խելքը» և «բարիքը» միմյանցից անկախ երևույթներ են, և անգամ օտար, իսկ եթե հատվում էլ են, ապա բացասման իմաստով»[11]: Պատկերը կարող է շատ ավելի խնդրահարույց դառնալ, երբ «.... ինչ-որ պահի նույն մարդը .... բարիք է անվանում այն, ինչը մեկ այլ պահի անվանում է չարիք»[12]: Քանի դեռ մարդը գտնվում է այս հարափոփոխության փուլում, նա չի կարող

---

[10] Նույն տեղում, էջ 189:

[11] А. Назаретян, Историческая эволюция морали: прогресс или регресс? // Вопросы философии, № 3, «Наука», Москва, 1992, с. 82:

[12] Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского // Т. Гоббс, Сочинения в двух томах. Т. 2. Пер. А. Гутермана, Издательство «Мысль», Москва, 1991, с. 123:

իրեն հեռու պահել բախման մեջ հայտնվելու վտանգից: Բարու և չարի պատկերացումները մասնակից են ոչ միայն ներանձնային աշխարհի գոյավորմանը, այլև բնության, աշխարհի հետ երկխոսելու առաջին՝ յուրացման փուլին, որում առկա է այլոց հետ հաղորդակցության մեջ մտնելու տարրը: Մարդկանց պատկերացումներում հաճախ բարին համարվում է «իմը» (իմ մտածածը, իմ կատարածը), իսկ չարը՝ «ոչ իմը», «ուրիշինը» կամ էլ մտածվում է, որ եթե դա իմը չէ, ուրեմն չարն է: Մանկահասակ երեխաների աշխարհաճանաչողության մեջ ևս չարի ըմբռնումը ամենասերտ ձևով կապված է նրա «ես»-ին տհաճություն, տխրություն պատճառողի հետ: Եվ, ընդհակառակը, կամեցածը ձեռք բերելուն հաջորդում է «դու լավն ես/բարի ես» որակավորումն այն մարդու նկատմամբ, ով նպաստում է դրա ստացմանը:

Եթե մարդուն առաջնորդողը սեփական բարիքը ձեռքբերելու համար մշտապես ամեն քայլի ընդունակ լինելն է, ապա կարելի է կարծել, որ նրան չպետք է ծանոթ լինեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ճշմարտությունն ու սուտը, արդարությունն ու ազնվությունը և դրանց հակոտնյա եզրույթները: Այս առթիվ, ի դեպ, տեղին է հիշատակել Արիստոտելին, որը ծայրահեղ կարևոր, վճռորոշ դերակատարում էր հատկացնում մարդու հանրայնացման հանգամանքին: Նա արդարության ըմբռնման ու դրա «տեղայնացման» հարցի միակ հնարավոր ճանապարհը տեսնում էր պատերազմի գաղափարի իմաստավորման մեջ. այն մարդկանց դաստիարակում է, քանի որ «ստիպում է լինել արդար ու զուսպ, իսկ ահա խաղաղության ուղեկից բարեկեցությունն ու հանգիստն առավելապես երես են տալիս մարդկանց»[13]: Սակայն, եթե տերմինի իմաստաբանական մեկնությունը կատարենք օգտապաշտության դիրքերից, ապա արդարության մեկնության, բնական վիճակում մարդկանց միջև ծագող բախումնային իրավիճակների ուղիների որոշակիացման հարցում տեղին է հիշատակել Թ. Հոբսի ներկայացրած կարգախոսն այն մասին, որ «արդարությունը ենթադրում է անփոփոխ կամք՝ տալու յուրաքանչյուր մարդու իր հասանելիքը»[14]: Վերջինիս իրագործման հավանական տարբերակներից մեկն էլ կարող է լինել հենց զինված բախումը: Երբեմն բախումների ժամանակ մարդու վարքագծի արդար լինելը մակա-

[13] Аристотель. Политика // Аристотель. Сочинения в четырех томах, Т. 4. Перев. и ред. А. Доватура, Мысль, Москва, 1983, с. 619-620:

[14] Т. Гоббс, Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского // Т. Гоббс, Сочинения в двух томах. Т.2. Пер. А. Гутермана, Издательство «Мысль», Москва, 1991, с. 110:

բերվում է նրան, թե որքանով է տվյալ քայլը բանական, իսկ բանականն այդ պարագայում անձի «...սեփական «ես»-ի համար բարիք ձեռք բերելու նպատակադրությունն է...»[15]: Այսինքն՝ *արդար է այն գործողությունը, որը բանական է, իսկ բանական է այն, ինչն ուղղված է սեփական բարիքին*: Ընդհանուր առմամբ հիշյալ եզրույթներն «արտաքինից» կարգավորումների կարիք ունեն, «.... բնորոշ են այն մարդկանց, ովքեր ապրում են հասարակության մեջ, և ոչ թե միայնակ»[16]: Սկզբունքորեն այն ամենը, ինչ գոյություն ունի, բոլորինն է. «սա իմն է» ու «սա իմը չէ» դրույթները պարզապես գոյություն չունեն: Ասել կուզի՝ ամեն ինչ կարող է ամեն պահի դառնալ յուրաքանչյուրինը, ով դա կամենա: Եվ այս կաղապարը գործարկելի է բոլոր մարդկանց դեպքում. սա է հավասարության էությունը: Բայց քանի որ յուրաքանչյուր մարդ կարող է և ամեն րոպե կորցնել այն, ինչ դառնում է բաղձալի մեկ այլ մարդու համար, ստեղծված իրավիճակը (որը և բնական վիճակն է) ընդհանուր առմամբ դուրեկան չէ:

Առհասարակ բախումնային խոսույթը, ի թիվս իմացական այլ նշանակությունների, անմիջականորեն ցուցադրում է ոչ միայն անձի, այլև հասարակական գիտակցության բարոյական տեսանկյունը: *Կարելի է կարծել* ՝ բախման ժամանակ շատ հաճախ պարտվում է այն անձը, ով ունի *բարոյական բարձր արժքներ:* Եվ, ի հեճուկս դրա, բախման ժամանակ հաղթանակի դափնին կարող է բաժին հասնել նրան, ով ներկայացնում է ճիշտ փաստարկներ, բայց իրեն դրսևորում է որպես «սրիկա»: Այս իմաստով բախումնային խոսույթում անպայմանորեն բացահայտվում են մասնակից կողմերի՝ միմյանց ճանաչելու հնարավորությունները: Տեղին է հիշել Լ. Ցոյի դիտարկումն այն մասին, որ «.... բախման ժամանակ ես ճանաչում եմ, թե ով է իմ ընկերը»[17]:

Բախումնային խոսույթի դերը ներհասարակական հարաբերությունների գոյավորման գործում

Այժմ փորձենք հակիրճ անդրադառնալ մարդկանց կյանքում բախման ազդեցությանն ու դրա նշանակությանը: Քննարկելով բախման կառուցողական դերը մարդու կյանքում՝ այն երբեմն դիտարկվում է որպես ինքնաբացահայտման յուրօրինակ ճանապարհ հատկապես այն մարդ-

---

[15] Նույն տեղում, էջ 112:

[16] Նույն տեղում, էջ 97:

[17] Л. Цой, Лекция «Философия конфликта» в ДК Триптих, տեսագրություն, էլ. աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=DaKPHX0Rzuc&t=356s, դիմելու ամսաթիվ /08.09.2020/:

կանց պարագայում, ովքեր ունեն միջանձնային ներքին խոր կապվածություն: «Սիրահարների բախումները տեղի են ունենում ոչ թե որևէ բան չքողարկելու և մեղքն ուրիշի վրա չգցելու, այլ պարզաբանման, անհամաձայնության աղբյուրը վերացնելու ցանկությամբ: Այսպիսի հակամարտությունները ավերիչ չեն: Նրանք առաջնորդում են դեպի փոխըմբռնում, ծնում «կատարսիս»: Հենց դա էլ բախման մեջ մտած երկու մարդկանց օգնում է դուրս գալու իրավիճակից նոր ուժերով համալրված և գիտելիքներով հարստացած»[18]:

Բախման ընթացքում տեղի է ունենում պայքար իշխանության, արժեքների, շահերի, տարաբնույթ նվաճումների (քաղաքական, գիտական և այլն) փաստման համար: Այս համաշարում հակառակորդին ոչնչացնելու մղումը դիտում ենք որպես բախման նպատակ (և այս իմաստով՝ որպես հավանական բացասական երևույթ) ու թեմատիկ մոտեցումներից մեկը՝ որպես միջանձնային հարաբերությունների բնույթը «փորձաքննելու» լավագույն առիթի շեշտադրում: Խոսքը վերաբերում է նախորդ դարում գործունեություն ծավալած, բախման փիլիսոփայության լավագույն տեսաբաններից մեկի՝ Գ. Զիմելի «ուղղամիտ» տեսանկյանը. «Եթե հարաբերություններում բախման առիթ երբևէ չի դրսևորվել, ապա դա որևէ կերպ չի կարող խոսել իրական ու խոր կապի մասին.... Ընդհակառակը, այդօրինակ վարքագիծը առավել հաճախ բնութագրական է այնպիսի հարաբերություններին, որոնք, չնայած քնքուշ, բարոյական ու փոխադարձ հավատարիմ լինելուն, այդուհանդերձ զերծ են անպայմանական հուզական նվիրվածությունից.... Այն մարդը, ով ունի հարաբերությունների ամրության նկատմամբ անվստահության զգացում, բայց ամեն գնով ձգտում է պահպանելու դրանք, մղվում է չափազանցված զոհաբերության, բախման ի հայտ գալու ամեն մի հնարավորության սկզբունքային խուսափման: Մեկ այլ դեպքում, եթե մենք վստահ ենք զգացմունքների անշահախնդրության ու անպայմանականության հարցում, մեզ անհրաժեշտ չի լինում ամեն գնով ձեռքբերվելիք խաղաղությունը: Մենք գիտենք, որ ոչ մի ճգնաժամ չի կարող ներթափանցել հարաբերությունների խորքը….»[19]:

---

[18] Է. Ֆրոմ, Սիրելու արվեստը, Անգլ. թարգմ. Մարգարյան Մ. , Գրիգորյան Հ., Մխիթար Գոշ, Երևան, 1996, էջ 93:

[19] G. Simmel, Conflict and The Web of Group-Affiliations. Trans. by Kurt H. Wolff, The Free Press, Glencoe, 1955, pp. 46-47:

Ի հեճուկս նախորդիվ առաջարկած կաղապարի՝ «փոխադարձ ներդամտության ու եղբայրության» շարժիչով գործարկվող ժամանակակից գաղափարական քարոզչամեքենան դրդում է գոնե տեսականորեն բախման իմաստավորումը կատարել ոչ թե մրցակցի չեզոքացման դիրքերից, այլ համաձայնության մթնոլորտ ձևավորելու նպատակադրությունից: Սակայն հանուն արդարության նշենք, որ հետխորհրդային շրջանում դեռևս չենք ձերբազատվել ժամանակին պարտադրաբար տրված մտքից բախման բացասական իմաստի վերաբերյալ: Եթե փորձենք թռուցիկ ըմբռնել, թե ինչու է հասարակության մեջ ձևավորվել բացասական վերաբերմունք բախման նկատմամբ, թերևս կարելի է առանձնացնել երկու հիմնական պատճառ: Առաջինն անմիջականորեն կապված է խորհրդային երկրներում տիրապետող աշխարհայացքի հետ: Դրանում բախմանը տրվում էր միայն բացասական, ապակառուցողական բնութագրություն: Իբրև հաջորդ օբյեկտիվ պատճառ կարելի է դիտարկել նախորդից մակաբերված, հասարակական գիտակցության մեջ ձևավորված պատկերացումը բախման՝ հարձակողականության, բռնության, բացասական հույզերի, թշնամանքի հետ անուղղակի հարաբերակցության մասին: Եթե առաջինի դեպքում վիճարկումը դժվար կտրվի (հաշվի առնելով «երկաթյա վարագույրի» գաղափարական ծանրությունը), ապա մյուսի պարագայում խնդիրը շատ ավելի հեշտ է, քանի որ «պայքարի օբյեկտն» ընդամենը սովորույթի ուժն է. մոտեցումների կամ դիրքորոշումների բախումը՝ որպես ներքին հակասականության վերհանման հնարավորություն, միշտ չէ, որ կապված է հարձակողականության հետ: Այսպիսի բախումնածին երևույթներ կարող ենք տեսնել գիտական հեղափոխությունների ժամանակ, երբ գիտական դպրոցները, հանրույթները պայքարում են գիտական վարկածների, տեսությունների հաղթանակների համար: Մենք պարզապես սովոր ենք բախումն ու հատկապես դրա հետևանքները զուգորդել հուզական, կենսական կաղապարների կազմաքանդման հետ: Եվ այսուամենայնիվ, ընդունելով բախման սերտաճումը կյանքին, *հակված ենք պնդելու,* որ այն ավելի շատ ոչ թե հետընթացի հաղորդում է, այլ զարգացման ազդակ:

Առհասարակ բախումնային խոսույթի հանրային դրսևորումների հետազոտությունների ուսումնասիրությունը երևան է բերում քննարկվող հարցի զանազան դիտակետեր: Վերջիններից մեկը վերաբերում է նրան, թե ինչ գործառական կարգավիճակ ունի բախումը հանրային միջավայրում: Չէ՞ որ հասարակության կազմավորման գործում բախումների մասնակցությունը խաղում է երբեմն վճռորոշ դեր: Եթե խոսելու լինենք, մաս-

նավորաբար, ներխմբային հակասության մասին, ապա պետք է նկատել, որ այն ևս նպաստում է գոյություն ունեցող փոխգործակցության կարգավորմանը, հատկապես եթե խմբի անդամներն ունեն ընդհանուր նպատակներ: «Խմբերում բախումների հաճախակիությունը վկայում է դրանց կենսագործունեության նկատմամբ անդամների կողմից ցուցաբերվող գործունության մասին»[20]: Այս կապակցությամբ, սակայն, հարկավոր է շեշտել, որ հանրային փոքր կամ մեծ միավորումներում ծագող և զարգացող ոչ բոլոր բախումները կարող են նպաստել կապերի ամրապնդմանն ու առավել ևս կայունացնել իրավիճակը ցնցումներից հետո:

Բախման ավարտն ազդարարում է հանրային տվյալ խմբում առկա կապերի վերահաստատում միայն այն դեպքում, երբ հակամարտության կողմերն ունեն արժեքային, նպատակային ու շահադիտական *նույն* տեսանկյունները: «.... Եթե մտերիմ հարաբերություններում բախման յուրաքանչյուր առիթ միանգամից իրացվում է և ոչ թե ճնշվում, այդ դեպքում թշնամական զգացումների կուտակում տեղի չի ունենում, իսկ հարաբերություններում տեղ չի գտնում ո՛չ երկիմաստություն... ո՛չ էլ լարվածություն»[21]: Այդպիսով՝ *բախման գոյությունը դառնում է ձևավորված կապերի երկարակեցության ցուցիչը*:

Բաց հասարակության կազմակերպման գրավականը համարելով մարդկանց տրվող հնարավորությունները՝ Ռ. Դարենդորֆը դրանց անմիջական արտացոլանքը տեսնում է բախումների մեջ. «Ժամանակակից հասարակության բախումները կապված են հենց մարդկանց կենսական հնարավորությունների հետ....»[22]: Եվ ըստ այդմ հեղինակը կայացնում է քաղաքականության մեջ ազատության ըմբռնման հետևյալ վճիռը. «Մեծաքանակ կենսական հնարավորություններ՝ շատ մարդկանց համար. ահա՛ ազատության քաղաքականության նպատակը»[23]: Իսկ որպես այդօրինակ ազատության գրավականներից մեկը հարկ է դիտարկել փոփոխությունների պատճառահետևանքային կապով ներկայացող պատմական զարգացումը: Որքան ինքնաբուխ ու յուրօրինակ է այդ փոփոխության խթանիչ հասարակական ուժը, այնքան կենսունակ կարող ենք համարել տվյալ հասարակությունը. «Բախումը հասարակության

---

[20] Л. Козер, Функции социального конфликта. Перевод с англ. О. Назаровой, Дом интеллектуальной книги, Москва, 2000, с. 109:

[21] Նույն տեղում, էջ 107:

[22] Р. Дарендорф, Современный социальный конфликт. Очерк политики свободы. Пер. с нем. «Российская политическая энциклопедия», Москва, 2002, с. 33:

[23] Նույն տեղում, էջ 33-34:

կենսական տարր է.... առհասարակ կյանքի՛ տարրն է»[24]: Եվ հետևապես մարդկանց համար բախումները «.... դառնում են առաջընթացի աղբյուր»[25], իսկ պատմության համար՝ ոչ թե դրա կերտման, այլ զարգացման գործոններից մեկը:

Ընդհանուր առմամբ, հանրային բախումը հասարակական դաշտում այս կամ այն չափով փոխազդեցության մասին է, որով պայմանավորված հանրային տիրույթում դրա տեսանելիությունը դառնում է միանգամայն տրամաբանական: Ելման կետը, որից և ճյուղավորվում է խնդրո առարկային հատկացրած մասնագիտական ուշադրությունը (մասնավորապես, սոցիոլոգիայի ու փիլիսոփայության ոլորտներում), վերաբերում է նրան, թե մի շարք տեսաբանների (Է. Դյուրքեյմ, Մ. Վեբեր, Գ. Մանհեյմ, Լ. Կոզեր, Ռ. Դարենդորֆ, Պ. Սորոկին, Թ. Պարսոնս, Գ. Զիմել, Պ. Բուրդյե և այլք) առաջարկած տեսություններում հանրային բախման ո՞ր հատկանիշը կամ դրսևորումն է առավել շեշտադրվել: Այսպես՝ մոտեցումներից մեկի համաձայն՝ հանրային բախումը՝ իր ամբողջականությամբ, հնարավոր է ճանաչել՝ ըստ ունեցած արդյունքի, այսինքն՝ արձանագրելով, թե ավարտին ինչ բովանդակություն այն հաղորդեց մասնակից կողմերին և որքանով իրագործեց խոսույթում ներգրավվածության առիթ դարձած նպատակը[26]: Այս պարագայում բախումնային խոսույթին վերագրվում է հակամարտության գործառական կաղապարի կարգավիճակ. բախումը լավագույնս ցուցադրում է իր գործառական նշանակությունը հասարակության զարգացման գործում:

Մասնագիտական գրականության մեջ հատուկ կարևորություն է տրվում նաև հասարակության ներսում բախման դրական նշանակությանը: Այս պարագայում որոշարկվում է ինչպես գաղափարական, այնպես էլ հանրամշակութային նույնականության[27] արմատավորման ու

---

[24] Р. Дарендорф, Тропы из утопии: Работы по теории и истории социологии // Р. Дарендорф Перевод с немецкого, Б. Скуратова, В. Близнекова. Праксис, Москва, 2002, с. 370:

[25] Р. Дарендорф, Современный социальный конфликт. Очерк политики свободы. Перевод с немецкого, «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), Москва, 2002, с. 42:

[26] Տե՛ս Л. Козер, Функции социального конфликта. Пер. с англ. О. Назаровой, Идея-Пресс, Дом интеллектуальной книги, Москва, 2000, էջ 144-146:

[27] Հանրամշակութային նույնականության մասին տե՛ս Է. Հարությունյան, Սոցիոմշակութային փոխակերպումներ և նույնականության ճգնաժամ // Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ III, Երևան, 2007, էջ 3-13:

դրա շարունակականության հաստատման հանգամանքը: Բախման նմանօրինակ ըմբռնման վկայությունը կարելի հանդիպել է Կ. Մարքսի տեսության մեջ. «Անհատները ձևավորում են դասակարգ միայն այն պատճառով, որ իրենք ստիպված են ընդհանուր պայքար մղել մեկ այլ դասակարգի դեմ. մնացյալ բոլոր դեպքերում նրանք միմյանց թշնամաբար դիմակայում են՝ իրար դիտարկելով որպես մրցակիցներ»[28]: Անգամ այն մարդիկ, ովքեր հանրային այս կամ այն հարթակում զբաղեցնում են նույն պաշտոնը, գիտակցում են միևնույն հարթակին պատկանող անձանց հետ շահերի, հետաքրքրությունների ընդհանրականությունը միայն բախման միջոցով: Այսպիսով՝ մարքսյան կաղապարում բախման դերակատարումը ամրակայվում է հանրային նույնականության վրա ուշադրության հրավիրմամբ, ինչն էլ ոչ միայն անհատի կայացման, այլև հասարակության հաջողությունն ու առաջընթացը ցուցանող պայմանն է:

Իսկապես հատկանշական է, որ հանրային բախման հայեցակարգային ըմբռնումներում բախումների ունեցած գործնական լուրջ ու դրական դերակատարման մասին ընդունված է խոսել այն պարագայում, երբ այն նպաստավոր է դառնում հասարակության կայացման համար: Շեշտադրումը կատարելով «բախման, նույնն է թե՝ գործունեություն» գաղափարի վրա՝ կա համոզում, ըստ որի՝ բախման մեջ գտնվելով է հնարավոր նույնականացվել հասարակության մաս կազմող հանրային տվյալ խմբի հետ՝ արձանագրելով դրանում ներառված անդամների համախմբվածությունը[29]: Ստացվում է, որ **բախումը հանրային փոխհարաբերությունների ու որոշակի ընդհանրության ապահովման գրավական է**: Եվ այս համաշարում հենց մենք կարող ենք խոսել հանրային բախման հեռանկարային նշանակության մասին: *Ծառայելով որպես հանրույթի տարրերի՝ միմյանց հետ երկխոսելու առիթ՝ ձևավորվում են նոր կապեր, ու դրանցով իսկ ամրանում են հասարակությունն ու իր ենթամակարդակները*:

---

[28] К. Маркс, Ф. Энгельс, Сочинения, Издание второе, Т. 3. Государственное издательство политической литературы, Москва, 1955, с. 54:

Եզրակացություն

Ամփոփելով շարադրանքը՝ կարող ենք փաստել, որ բախումնային խոսույթը դարձել է կեցության կազմավորման կարևորագույն ազդակը: Այն իր գործուն մասնակցությունն ունի մարդու մտածողության, վարքագծի ձևավորման ու միջանձնային հարաբերությունների գործնական դրսևորումների հարցում: Առհասարակ այլ անձին ընկալելը, հասկանալն ամենևին էլ իմացական հեշտ գործընթաց չէ, հատկապես երբ առկա են մշակութային (օրինակ, լեզվական) ու մտահայեցողական տարբերություններ[30]: Մարդիկ հեշտ են հասկանում այն, ինչն արդեն որոշակի չափով հասցրել են ճանաչել: Իսկ եթե հավելենք նաև հանրույթում հընթացս տեղի ունեցող փոփոխությունները ու վերջինիս առաջ բերած անկայուն տարուբերումները, ապա կարող ենք արձանագրել, որ բախումնային հակամարտության ծնունդը դառնում է լռելյայն ընդունելի իրողություն: Այս ամենի հետևանքով է, որ ի վերջո, անգամ հետընթացից հետո, արձանագրվում է զարգացում, որն էլ կյանքի, գուցե ոչ միակ, բայց իրական զարկերակն է:

Գրականություն

1. Դեմիրճյան Մ., Հասկացումը փիլիսոփայական գիտելիքի համակարգում // ԲԵՀ, փիլիսոփայություն, հոգեբանություն, Երևան, 2020 № 1 (31), էջ 55-65:
2. Հարությունյան Է., Սոցիոմշակութային փոխակերպումներ և նույնականության ճգնաժամ // Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ (հոդվածների ժողովածու), Պրակ III, Երևան, 2007, էջ 3-13:
3. Ոսկանյան Ա., Հասկացման անխուսափելիությունը (դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաքանդման պատմությունից), ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 318 էջ:
4. Ֆրոմ Է. Սիրելու արվեստը, Անգլ. թարգմ. Մարգարյան Մ. Մ., Գրիգորյան Հ. Հ., Մխիթար Գոշ, Երևան, 1996, 115 էջ:

[30] Հասկացման փիլիսոփայական մեկնաբանության մասին տե՛ս Ա. Ոսկանյան, Հասկացման անխուսափելիությունը (դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաքանդման պատմությունից), ԵՊՀ հրատ., Երևան, 2015, 318 էջ: Մ. Դեմիրճյան, Հասկացումը փիլիսոփայական գիտելիքի համակարգում //ԲԵՀ, փիլիսոփայություն, հոգեբանություն, Երևան, 2020 № 1 (31), էջ 55-65:

5. Аристотель. Метафизика // Аристотель. Сочинения в четырех томах. Т. 1. Перев. и ред. А. И. Доватура, Мысль, Москва, 550 с.
6. Аристотель. Политика // Аристотель. Сочинения в четырех томах, Т. 4. Перев. и ред. А.И. Доватура, Мысль, Москва, 1983, 832 с.
7. Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского // Гоббс Т. Сочинения в двух томах. Т.2. Перевод А. Гутермана, Издательство «Мысль», Москва, 1991, 736 с.
8. Гусейнов А. Апресян Р. Этика: Учебник. Гардарики, Москва, 2000, 356 с.
9. Дарендорф Р. Современный социальный конфликт. Очерк политики свободы. Пер. с нем. «Российская политическая энциклопедия», Москва, 2002, 288 с.
10. Дарендорф Р. Тропы из утопии: Работы по теории и истории социологии // Дарендорф Р. Перевод с немецкого Б. Скуратова, В. Близнекова. Праксис, Москва, 2002, 534 с.
11. Козер Л. Функции социального конфликта. Перевод с англ. О. А. Назаровой, Дом интеллектуальной книги, Москва, 2000, 205 с.
12. Конфуций. Суждения и Беседы, Издание 2-е, Феникс, Ростов-на-Дону, 2006, 304 с.
13. Куэ Э. Сознательное самовнушение как путь к господству над собой. Амрита-Русь, Москва, 2005, 192 с.
14. Маркс К. Энгельс Ф. Сочинения, Издание второе, Т.3. Государственное издательство политической литературы, Москва, 1955, 650 с.
15. Назаретян А. Историческая эволюция морали: прогресс или регресс? // Вопросы философии, № 3, «Наука», Москва, 1992, 194 с.
16. Сейранян М. Ю. Конфликтный дискурс и его просодический строй: Монография, Москва, МПГУ, 2016, 246 с.
17. Фромм Э. Бегство от свободы. Человек для себя // Фромм Э. Перевод с английского, АСТ МОСКВА, Москва, 2006, 574 с.
18. Цой Л. Лекция «Философия конфликта» в ДК Триптих, տեսագրություն, էլ աղբյուր՝ https://www.youtube.com/watch?v=DaKPHX0Rzuc&t=356s, դիմելու ամսաթիվ (08.09.2020):
19. Эко У. Пять эссе на тему этики. «Симпозиум», СПб., 2003, 160 էջ:
20. Simmel G. Conflict and The Web of Group-Affiliations. Trans. by Kurt H. Wolff, The Free Press, Glencoe, 1955, 208 p.

Конфликтный дискурс как необходимый фактор формирования личности и общества

Ани Арутюнян

Резюме

Ключевые слова: *бытие, социальная среда, межличностные отношения, социализация, ценностные представления, социальная идентичность, развитие*

Целью данной статьи является анализ темы взаимоотношения природы человека и общества с точки зрения определения содержания конфликтного дискурса. Было показано, что конфликт способствует социализации личности. В конфликте человек тестирует и адаптирует для себя ряд моральных ценностей для того, чтобы сделать процесс самореализации более полезным. Далее в ходе исследования было выявлено, что формирование социокультурного компонента становления индивида в обязательном порядке подразумевает разные причины возникновения конфликтогенных ситуаций. Также утверждается тезис о том, что конфликтный дискурс является очень важным элементом поведения личностного бытия, проявляющегося на внутриобщественном уровне. В этом случае конфликт становится лучшим показателем качества межличностных отношений.

Кроме того, данный анализ подчеркивает как качественную сторону связей, формируемых небольшими группами общества, так и положительное и отрицательное влияние этих связей на формирование социальной идентичности.

В результате был сделан вывод о том, что конфликтный дискурс абсолютно необходим как для формирования личности, так и для становления и развития общества, поэтому он имеет онтологически обоснованный статус.

Conflict Discourse as a Necessary Factor in the Formation of Individual and Society

Ani Harutyunyan

Summary

Key words: *being, social environment, interpersonal relations, socialization, ideas, social identity, development*

The aim of this article is to analyze the relationship between human nature and society through determining the content of conflict discourse. It has been shown that conflict contributes to the socialization of an individual. In a conflict, a person tests and adapts for himself some moral values to make the process of self-realization more fulfilling. Further, it has been revealed that the formation of the socio-cultural component of the individual's formation necessarily implies different reasons for the occurrence of conflict-prone situations. Therefore, the thesis is affirmed that the conflict discourse is an important element of the behavior of personal being, manifested on an intra-societal level. In this case, the conflict becomes the best indicator of the quality of interpersonal relations.

Also, this analysis emphasizes the qualitative aspect of the connections formed by small groups of society, as well as their positive and negative influence on the formation of social identity.

In the end, it was concluded that conflict discourse is necessary both for the formation of the personality and for the formation and development of society, therefore it has an ontologically justified status.

Ներկայացվել է 15.04.2021 թ.
Գրախոսվել է 23.04.2021 թ.
Ընդունվել է տպագրության 17.05.2021 թ.